Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-706-13.11.2023-ՏՏԳԾ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ՕԶՈՆԱՅԻՆ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Օզոնային շերտի պահպանության մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-218-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «գազեր» բառից հետո լրացնել «կամ դրանք պարունակող խառնուրդներ» բառերը և 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«12) **հոսակորուստ՝** կարգավորվող նյութեր պարունակող կայանքներից (սառնարան, օդորակիչ, ջերմային պոմպեր և սառնագենտ պարունակող այլ սարքավորումներ) կարգավորվող նյութի կորուստը տարեկան 3 գրամից ավելի.

13) **հոսակորուստի դիտանցում՝** իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվող գործընթաց, որը ենթադրում է սահմանված դեպքերում և ժամանակահատվածում իրենց կողմից շահագործվող օդորակման, սառնամատակարարման, ջերմային պոմպերի և սառնագենտ պարունակող այլ սարքավորումների համակարգերում հոսակորուստների հայտնաբերման նպատակով ստուգում և արձանագրում համապատասխան գրանցամատյանում.

14) **ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութ՝** արդեն իսկ օգտագործված, սակայն նոր նյութերի բնութագրերին համարժեք վերամշակված սառնագենտ, ինչի մասին վկայում է որակի հավաստագիրը.

15) **հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ՝** կարգավորվող նյութեր պարունակող կայանքներ (սառնարան, օդորակիչ, ջերմային պոմպեր և սառնագենտ

պարունակող այլ սարքավորումներ), որոնցում այդ նյութերի պարունակությունը երեք և ավելի կիլոգրամ է:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«8) կարգավորվող նյութերի գործածման բնագավառում հոսակորուստների դիտանցման կարգի, դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյանի վարման կարգի և ձևի հաստատումը:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

1. 1-ին մասը լրացնել 4-րդ և 5-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«4) կարգավորվող նյութերի ներմուծումը մեկանգամյա օգտագործման տարաներով, բացառությամբ լաբորատոր նպատակներով ներմուծման դեպքերի.

5) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն 2039 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Մոնրեալի արձանագրությամբ սահմանված կարգավորումների: Ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութերը կարող են ներմուծվել մինչև 2039 թվականը ներառյալ:»

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

1. 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «4. Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակ ստացած իրավաբանական անձինք ու որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, պետական լիազոր մարմին են ներկայացնում կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին տարեկան հաշվետվություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական միության օրենսդրությամբ սահմանված ձևի:»:
2. 10-րդ մասում «նաև» բառը փոխարինել «բացառապես» բառով:

Հոդված 6. Օրենքը լրացնել 8.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 8.1. Հոսակուրուստների նկատմամբ հսկողություն**

1. Այն իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնց կողմից գործարկվում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտները, պարտավոր են այդ օբյեկտների նկատմամբ իրականացնել հոսակորուստների դիտանցում և սահմանված կարգով վարել դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյան: Հոսակորուստների հայտնաբերումից հետո տնտեսավարողները դրանք պարտավոր են վերացնել հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք պարտավոր են սույն Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով, յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, լիազոր պետական մարմին ներկայացնել հոսակորուստների դիտանցման վերաբերյալ տեղեկատվություն: Տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում՝ լիազոր պետական մարմինն այդ մասին մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:»:

Հոդված 7.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ մեկանգամյա օգտագործման տարաներով ներմուծման, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:
2. Սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կատարվող լրացումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից և տարածվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում 2024 թվականից անհատական չափաքանակի տրամադրման հայտերի ներկայացմամբ ծագող հասարակական հարաբերությունների վրա:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ Կառավարությունը վեց ամսվա ընթացքում ընդունում է սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական ակտը:
4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթն ուժի մեջ է մտնում «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի գործարկումից հետո:

ՏԵՂԵԿԱՆՔ

««Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի փոփոխվող հոդվածների վերաբերյալ

Հոդված 1. ~~Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի~~ «Օզոնային շերտի պահպանության մասին» 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-218-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «գազեր» բառից հետո լրացնել «կամ դրանք պարունակող խառնուրդներ» բառերը և 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 12-րդ, 13-րդ, 14-րդ և 15-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«12) **հոսակորուստ՝** կարգավորվող նյութեր պարունակող կայանքներից (սառնարան, օդորակիչ, ջերմային պոմպեր և սառնագենտ պարունակող այլ սարքավորումներ) ~~և տարաներից~~ կարգավորվող նյութի կորուստը տարեկան 3 գրամից ավելի.

13) **հոսակորուստի դիտանցում՝** իրավաբանական անձանց և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձանց կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովվող գործընթաց, որը ենթադրում է սահմանված դեպքերում և ժամանակահատվածում իրենց կողմից շահագործվող օդորակման, սառնամատակարարման, ջերմային պոմպերի և սառնագենտ պարունակող այլ սարքավորումների համակարգերում հոսակորուստների հայտնաբերման նպատակով ստուգում և արձանագրում համապատասխան գրանցամատյանում.

14) **ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութ՝** արդեն իսկ օգտագործված, սակայն նոր նյութերի բնութագրերին համարժեք վերամշակված սառնագենտ, ինչի մասին վկայում է որակի հավաստագիրը.

15) **հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտներ՝** կարգավորվող նյութեր պարունակող կայանքներ (սառնարան, օդորակիչ, ջերմային պոմպեր և սառնագենտ պարունակող այլ սարքավորումներ), որոնցում այդ նյութերի պարունակությունը երեք և ավելի կիլոգրամ է:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել 8-րդ կետով հետևյալ բովանդակությամբ.

«8) կարգավորվող նյութերի գործածման բնագավառում հոսակորուստների դիտանցման կարգի, դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյանի վարման կարգի և ձևի հաստատումը:»:

Հոդված 3. Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 4. Օրենքի 6-րդ հոդվածում՝

~~1)~~ 1. 1-ին մասը լրացնել 4-րդ և 5-րդ կետերով հետևյալ բովանդակությամբ.

«4) կարգավորվող նյութերի ներմուծումը մեկանգամյա օգտագործման տարաներով, բացառությամբ լաբորատոր նպատակներով ներմուծման դեպքերի.

5) օզոնային շերտը քայքայող նյութերի ներմուծումը Հայաստանի Հանրապետություն 2039 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ Մոնրեալի արձանագրությամբ սահմանված կարգավորումների: Ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութերը կարող են ներմուծվել մինչև 2039 թվականը ներառյալ:»

Հոդված 5. Օրենքի 8-րդ հոդվածում՝

3. 4-րդ մասը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «4. Կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակ ստացած իրավաբանական անձինք ու որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, պետական լիազոր մարմին են ներկայացնում կարգավորվող նյութերի ներմուծման անհատական չափաքանակի օգտագործման մասին տարեկան հաշվետվություն՝ համաձայն Եվրասիական տնտեսական միության օրենսդրությամբ սահմանված ձևի:»:

4. 10-րդ մասում «նաև» բառը փոխարինել «բացառապես» բառով:

Հոդված 6. Օրենքը լրացնել 8.1 հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«**Հոդված 8.1. Հոսակուրուստների նկատմամբ հսկողություն**

3. Այն իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք, որոնց կողմից գործարկվում են հոսակորուստների դիտանցման ենթակա օբյեկտները, պարտավոր են այդ օբյեկտների նկատմամբ իրականացնել հոսակորուստների դիտանցում և սահմանված կարգով վարել դիտանցման արդյունքների հաշվառման գրանցամատյան: Հոսակորուստների հայտնաբերումից հետո

տնտեսավարողները դրանք պարտավոր են վերացնել հնարավորինս շուտ, բայց ոչ ուշ, քան 14 օրվա ընթացքում:

4. ~~Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք~~ Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք պարտավոր են սույն Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված կարգով էլեկտրոնային եղանակով, յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա փետրվարի 1-ը, լիազոր պետական մարմին ներկայացնել հոսակորուստների դիտանցման վերաբերյալ տեղեկատվություն: Տեղեկատվությունը չներկայացնելու դեպքում՝ լիազոր պետական մարմինն այդ մասին մեկամսյա ժամկետում գրավոր տեղեկացնում է մթնոլորտային օդի պահպանության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին:»:

Հոդված 7.

5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից, բացառությամբ մեկանգամյա օգտագործման տարաներով ներմուծման, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

~~5.~~6. Սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կատարվող լրացումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից և տարածվում է օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում 2024 թվականից անհատական չափաքանակի տրամադրման հայտերի ներկայացմամբ ծագող հասարակական հարաբերությունների վրա:

~~6.~~7. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ Կառավարությունը վեց ամսվա ընթացքում ընդունում է սույն օրենքի 2-րդ հոդվածով նախատեսված ենթաօրենսդրական ակտը:

~~7.~~8. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթն ուժի մեջ է մտնում «Թույլատվական փաստաթղթեր (sw.gov.am)» համակարգի գործարկումից հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««Օզոնային շերտի պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-706-13.11.2023-ՏՏԳՇ-011/0) և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի (փաստաթղթային կոդ՝ Կ-706[1]-13.11.2023-ՏՏԳՇ-011/0) վերաբերյալ ներկայացված առաջարկությունների»

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ Կառավարություն	«Օզոնային շերտը պահպանության մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»	Վերնագրում «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ» բառը փոխարինել «ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ» բառով: Առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի	Ընդունվել է:	Ընդունվել է:

		օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերնագրում	մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասից, որ նախագծով սահմանվում են մեկից ավելի փոփոխություն:		
2.		Նախագծի 1-ին հոդված	1-ին հոդվածում հանել «Հայաստանի Հանրապետության» բառերը, իսկ «Օզոնային շերտի պահպանության մասին» բառերը տեղափոխել «2006» թվից առաջ: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որ «*Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս* հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			հերթական համարը և «օրենք» բառը»:		
3.		Նախագծի 1-ին հոդվածի 12-րդ կետ	Նախագծի 1-ին հոդվածի 12-րդ կետի «և տարաներից» բառերը հանել, քանի որ նախագիծը կարգավորում է սառնամատակարարման փակ համակարգը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.		Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածով Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «1)» փոխարինել «1.», 5-րդ կետում «Ռեգեներացված նյութերը բառերը փախարինել «ռեգեներացված (վերականգնված) օզոնային շերտը քայքայող նյութերը» բառերով, հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			մասերով սահմանված կարգավորումներից. «*1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրածանոթ հասկացություններ կամ տերմիններ: 2. Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:*»:		
5.		Նախագծի 5-րդ հոդված	Նախագծի 5-րդ հոդվածով Օրենքի 8-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասում լրացնել «4.» թիվը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

6.		Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածով Օրենքում լրացվող նոր՝ 8.1-ին հոդվածի 2-րդ մասում «Իրավաբանական անձինք և որպես անհատ ձեռնարկատեր հաշվառված ֆիզիկական անձինք» բառերը փոխարինել «Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված անձինք» բառերով, «Օրենքի» բառը փոխարինել «սույն օրենքի» բառերով, «այդ մասին» բառերից հետո լրացնել «մեկամսյա ժամկետում» բառերով, քանի որ նախագծով սահմանված չէ, թե լիազոր մարմինը ինչ ժամկետում է պարտավոր ներկայացնել համապատասխան ըեղեկատվությունը տեսչական մարմին:	Ընդունվել է:	Ընդունվել է:

7.		Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մաս	Նախագծի 7-րդ հոդվածի վերնագիրը՝ «***Անցումային եւ եզրափակիչ դրույթներ***» հանել, 1-ին մասում «հունվարի 1-ից» բառերից հետո լրացնել «բացառությամբ մեկանգամյա օգտագործման տարաներով ներմուծման, որն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից» բառերով: Նախագծի 7-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 2-րդ մասով և ուղղել համարակալումները. «2. Սույն օրենքի 1-ին հոդվածով Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում կատարվող լրացումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից և տարածվում է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում 2024 թվականից անհատական չափաքանակի տրամադրման հայտերի ներկայացմամբ ծագող հասարակական հարաբերությունների վրա:»: Սույն լրացումը բխում է իրավակիրառ պրակտիկայում տարընթերցումներից խուսափելու անհրաժեշտությամբ, որը կարող էր ծագել «հիդրոֆտորածխածիններ» հասկացությունում նախագծով առաջարկվող լրացման արդյունքում և դրանց ներմուծման գործընթացում:		
8.		«Վարչական իրավախախտումների վերաբերյալ	Նախագծի 1-ին հոդվածում «Հայաստանի Հանրապետության» բառերը շարադրել «օրենսգիրքը»	Ընդունվել է:	Ընդունվել է:

		Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդված	բառից հետո, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» արտահայտությունը շարադրել առանց չակերտների և հոդվածների համարները գրելիս պահպանել դասական թվականների ճիշտ գրելաձևը: Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված պահանջի կատարումը, այն է. «*Սահմանադրական օրենք չհանդիսացող օրենսգրքի լրիվ անվանումը հիշատակելիս հետևյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, օրենսգրքի*		

			վերնագիրը և «օրենսգիրք» բառը, եթե վերնագիրը չի ներառում այն»:		
9.		Նախագծի 2-րդ հոդված	նախագծի 2-րդ հոդվածի «հունիսի» բառը փոխարինել «հունվարի» բառով, հիմք ընդունելով, որ վարչական իրավախախտում սահմանող դրույթների և դրանց համար նյութական հիմք հանդիսացող դրույթների ուժի մեջ մտնելու ժամկետները պետք է լինեն միմյանց համապատասխան	Ընդունվել է:	Ընդունվել է: